ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 116

25.04.2024թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ցանցային մալուխների, արևային վահանակների և կապարային մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 03572381, գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ռոստովյան 15/12), (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝

«ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հավելված 1-ում բացակայում էր վերոնշյալ ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը (Քանի որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը պետք է դիմում հայտարարությունը լրացնելիս նշի «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը), Հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը և գծագիրը, ինչպես նաև արևային վահանակի համար հրավերով սահմանվել էր «Լարումը մաքսիմալ հզորության ժամանակ առնվազն (Vmp) 33Վ», իսկ ընկերությունը ներկայացրել էր պահանջվածից ավելի ցածր պարամետրեր՝ «Լարումը մաքսիմալ հզորության ժամանակ առնվազն (Vmp) 31.76Վ»:

ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողովը «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել անհամապատասխանությունները:

Սակայն ծանուցմանն ի պատասխան «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ և Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել է «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նշված դրույթը ավելի բացված տեսքով նախատեսվել է նաև Ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետով, որի համաձայն՝ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (այդ թվում շտկման ենթակա), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը:

Ընկերությանը 15.04.2024թ. ծանուցվել է առ այն, որ հայտի մերժման արդյունքում ընկերությունը կարող է վճարել ներկայացրած հայտի ապահովումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն խուսափել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց:

Հաշվի առնելով, որ «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովումը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ